ՓՈՒՆՋ

Պաշիս բաժանորդ ըլլալ ուզողը մեկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ փորրիկներու 100 թուղթ հատ, իսկ պատուաց մէջ 30 կրչ. դրամ։ 100 թուղթ համար։ Թիֆիտարութեան ծախքէ զատ ըլլալով։ — Եարանդերթին տարեկանն է միայն երկու ոսկի Մէճիտ եւ հատը 40 փարա։

ՕՐԱԳԻՐ

10 վարակ

Տուողման տոքս 40 փրչ է մէկ անգամի համար։ Իսկ աեղիին սակարկութիւն կը չինի։

Օրագրիս վերաբերեալ գրութիւնք դիտը է ուղղել աու Տնօրէնն Կ. Պոլիս Մահմուտ փաշա Քիւրքճի խան ջարի ջարկ Թիւ. 26 Քալֆաեանի Տղարան։

Թիւ 20 — ԵՐԵՔՇԱԲԹԻ — 20 ՀՈՒՆԻՍ 1872

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐԸՆԾԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԸ

Վերջապէս՝ կիլիկիոյ կաթողիկոսն իւր աթոռային վայր Հաստատուելու համար ամեն միջոց ի դործ կդնէ, թէեւ՝ տակաւին բարձրագոյն տեղերէ բողոքներ կան իւր կաթողիկոսանալուն դէմ, թէեւ՝ տակաւին Բ. Դրնէն իւր վաւերացման հրովարտակն եղած չէ։

Դիտել պէտք է։ Ա.յս կաթողիկոսն երբ իմացաւ թէ ամենայն Հայոց վերհսկող Հայրապետը մայիս 21 ին Միւռեան պիտի օրհնէ, վռնթացաւ ինքն ալ օրհնել և օրհնեց մայիս 21 ին յառաջ։

Դիտել պէտք է։ Ա.յս կաթողիկոսն, որպէս զի կաթողիկոս լինելն թէ ինքն իմանայ և թէ այլոց ալ իմացունէ, միայն Միւռոն օրհնել բաւական չհամարելով եպիսկոպոս մ՚ալ ձեռնադրեր է, և այս նորընծայ եպիսկոպոսն ալ չուտով ձեռնադրեր է վարդապետ և քահանայ մի։ —Ո՛վ է այս նորընծայ եպիսկոպոսն։ — Պօղոսճի մականուանեալ Ճակոբ վարդապետը՝ որ Անթէպի առաջնորդութեան պաշտօն ունի։ այս վարդապետը անցեալները իւր վիճակին վերաբերեալ խնդրոյ մի պատճառանօք մայրաքաղաքիս մէջ բաւական տաեն թափառեցաւ, և աշխատեցաւ որ Ս. Պատրիարքէն վերկայական առնելով էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու երթայ, բայց Ս. Պատրիարք Հայրը ինչպէս այլոց նոյնպէս և սորա համար վկայական տալ մերժեց։

Ա.րդ՝ եթէ էջմիածնէն եպիսկոպոսութեան աստիճան ընդունելու անարժան էր այս վարդապետը, ինչպէս արժանի եղաւ Ծսէն յիշեալ աստիճանն ընդունելու։

Եւ, մինչ Ս. Պատրիարք Հօր թէնամին ու հակառակորդն եղած կըլլանք, երբ հարցունենք թէ յիշեալ վարդապետին ձեռքը ով վկայական տուաւ։ Եթէ եպիսկոպոսութեան աստիճանի արժանաւոր էր, և եթէ Ս. Պատրիարքը տուաւ վկայականը, ինչու ուրեմն երբ Յակոբ վարդապետ էջմիածին եպիսկոպոսանալ երթալու վկայական կուզէր, չտուաւ Ս. Պատրիարքը։ Եթէ այսպէս է, ուրեմն մեր Ս. Պատրիարքը ատելութիւն ունի ամենայն Հայոց Հայրապետական Աթոռոյն և նորին վեհափառ Գահակալին դէմ։ ուրեմն ուխտաւալ է էջմիածնի եպիսկոպոսութեան համար մարդ չղրկել, ինչպէս կդուշակեն ոմանք և մեք յաճախ եմք և կարծեմք լրագրոյ մէկին ալ այսպէս հրատարակած է յանդիման։

Իսկ եթէ այսպէս չէ. այսինքն՝ Ս. Պատրիարք Հօր կողմանէ վկայական տըր-

ուած չէ, և կիլիկիոյ կաթողիկոսն ինքն ուզեր ձեռնադրեր է, առաւել և առաւել մեղադրելի է Ս. Պատրիարքը և իւր հրաժարեալ Գազազական ժողովը, երբ մեք այլոց հետ թէ՛ լրագրի և թէ՛ եւրոպական ժողովոյ մէջ ամենայն զօրութեամբ կը ցուցքէինք, թէ պէտք և պարտք է եկեղեցական ընդհանուր ժողովոյ որոշման համեմատ նախ Ս. Էջմիածնի և Պօլսոյ հետ Սոյց աթոռոյն ունենալիք յարաբերութիւնները սահմանել և ապա վաւերացունել կաթողիկոսին ընտրութիւնը, մեզի դէմ յարձակեցան՝ հեգնեցին զմեզ, հեգնեցին նաեւ ամենայն Հայոց Հայրապետը, և ըսին թէ խոստմնադիր տուած է ընդունիլ ինչ յարաբերութիւն որ որոշուի. աղաղակեցին մեր երեսն ի վեր, աղաղակեցին մեզի դէմ, վա՛յ կարդացին և քիչ մնաց որ թքանէին մեր երեսն ի վեր, առարկելով թէ կիլիկիոյ աղգայինք թշուառ, անօք ու անհովիւ են, և մեք խնդրոյն անյապաղ լուծման բարիդրդականութիւնը չճանչնալով յարաբերութեանց խնդիրն նախադասել կը պնդեմք:

Ո՛ւր են զմեզ նախատողները, թող լսեն. Կիլիկիոյ կաթողիկոսը եպիսկոպոս ձեռնադրեր է, եպիսկոպոսն ալ վարդապետ, քահանայ ձեռնադրեր է. քանի դիտեմք թէ կրօնական ժողովը տեղեկութիւն չունի և վկայական տուած չէ. նոյնպէս Ս. Պատրիարքը վկայական տուած ըլլալու չէ, որովհետեւ Էջմիածին երթալու համար չտուաւ, և եթէ տուած ալ լինի՝ ընդունելի չհամարուիր առանց կրօնական ժողովոյ դիտութեան լինելուն համար:

Կիլիկիոյ կաթողիկոսը տակաւին շատ բան կընէ, քանի որ յարաբերութեանց սահման մի չկայ. տակաւին շատ եպիսկոպոսներ պիտի ձեռնադրէ առանց երեք արժանին ու անարժանն ընտրելու. այս պիտի ընէ, որպէս դի աճի, զօրանայ, ստուարանայ և ամեն կողմ ճիւղեր արձակէ:

Կայսերական կառավարութիւնը ծանուցեր է հռոմէական աղգայնոյ երբեմն պատրիարք Հասուն Էֆէնտիին, թէ ինքն այսուհետեւ բոլոր Տաճկաստանի մէջ չընդունուիր, և թէ պարտաւորեալ է ուրիշ երկիր երթալ հաստատել իւր բնակութիւնը:

Հասուն Էֆէնտի լսելով կառավարութեան այս ազդարարութիւնը, չփոթեր՝ այլայլեր, և կըսուի թէ՝ նախարարաց ժողովին ներկայացեր, և իւր վհատութեան պատճառն լսանալ ուզեր է. ծանուցեր է, թէ պատճառն՝ գրգռիչ ու խռովայոյզ լինելն է. Հասուն Էֆէնտի դրսով խնդրեր է այս ազդարարութիւնը, և ժողովն ալ հաճութիւն տուեր է:

Մեծ բեռ մը կերթայ Տաճկաստանի մանաւանդ մեր Ազգին վրայէն:

Ջեմք կրնար չուտով մոռնալ Գասպարի խնդիրն, որովհետեւ հետաքրքրական է. Եւ ահա կծանուցանեմք, թէ երուսաղիմայ ազգային վարչութիւնը լսելով որ Գասպար երուսաղիմէն փախած է, այլեւայլ կողմեր հեռագիր քաշեր է զանի գտնելու համար, և այս պատճառաւ 12 լիրայի չափ ծախք ըրեր է:

Ուրեմն ով է որ քանի մի անդամ երուսաղիմայ Սրբազան տաճարաց մէջ Գասպարին պատուարգ մատուցանել տուեր է:

Գասպար ազգային Հիւանդանոցի մէջ չէ, Հանգիստ կեանք կվարէ իւր տանը մէջ: Միայն քահանայութեան կարգէն լուծուած է, և մինչեւ ցայժմ ուրիշ պատժոյ ենթարկեալ չէ:

Երեկ ցաւ և սիրտ նշանակեցինք Մարզուանու մէջ դպրոցի մը դռուած

լինելն ։ Ահաւասիկ, հետեւեալ նամակին ալ կդուժէ կիւմիւշխանէի դպրոցին գոյութիւն։ կիւմիւշխանէի ազգայնոց պատիւ չբերեր այս դէպքին, և մանաւանդ պակաս կիւմիւշխանէցի մեծ. Մ. Իւթիւճմազեանի, որոյ ուսումնասիրութեան տեղեակ եմք վարձով։ կ՚յուսամք, որ լսելով իւր հայրենակից վարժարանին գոյութիւն, կխնամէ իւր ձեռնհասութիւնն ի գործ դնել, վասն զի ներկին Թուրքիոյ մէջ չատ մեծ պէտք կան տղայքն հաւաքել և ուսման տալու համար, որ ըստ մեզ չատ մեծագործութիւններէ մեծ է ։

. . . Խմբագիր

Մինչդեռ դարուս ոգին ընտանեաց և ազգաց մէջ դաստիարակութեան ծաւալման և ընդհանրացմանը համար ջանք և ճիգ չեն խնայեր, մինչդեռ օրէնքներ զաւակները անկրթութեան դատապարտող հայրեր կը պատժեն, մինչդեռ այն՝ ամեն կողմէ անդադար դպրոցներ հիմնարկներ բարեգործութիւններ բացման առիթ թէ՛ բարոյապէս և թէ նիւթապէս զոհողութիւններ անպակաս են ի շնորհս ազգասիրաց և բարերարաց, այս անգամ ցաւ խիրտ Հայրենիք լրագրոյ 103 րդ թուոյն մէջ կարդացի որ իմ սիրելի հայրենացս կիւմիւշխանէի եկեղեցւոյ վերանորոգութեան առիթ բարոյական տաճարն կործանման կենթարկի, և 200 ի չափ աշակերտք փողոցները տատանդական չրջելու կտիպտուին յանթի և ի նախատինս մարդկութեան՝ չնորհիւ և ջանիւք Տ. Մեսրոպ անուն քահանային (երէց տեղեկութիւններն ստոյգ են) զոր տասն և եօթը տարի ամուլ վարժապետական պաշտօն մը վարելէն վերջը, այսօր կրօնական զգեստին տակ իբր կրօնքի չերմ պաշտպան չնքն եւս բոլորովին ամլութեան և անդործութեան վերածել ուզած է վարժարանին տնօրէնն եւս ճամբելով։

Հայրենակիցք, չէի կարծեր որ այդչափ տգիտացած ըլլաք դարուս պատմագրական էջերուն մէջ այս վատ անուան տուները ընդունելու թէ՝ դպրոցը գոցեցին և զեկեղեցին չհնեցին ։ Ո՛չ ապաքէն նոյն եկեղեցւոյ ճչմարիտ երկրպագուներ և զայն կանգնող աստուածասէրներ և կրօնասէրներ այն իմաստութեան տաճարէն պիտի ծնանին. ո՛չ ապաքէն Ձեր սիրելի որդիքը և թոռունքը զոր այսօր տգիտութեան ճիրաններուն մատնել կուզեք, վաղ ձեռաց և խորհրդի մը միջոցաւ, ապագային անիծից չանքեր պիտի տեղան Ձեր գլխուն ։

Հայրենակիցք, « ո՛վ որ դպրոց մը կը գոցէ, թող տասմար մը պղծէ » ի՞նչ անօրէն միջոց, միթէ կը պակսի՞ն Ձեզ համար սրբավայրեր ձեր հոգեւոր պիտոյքներն ընդունելու անդ, որով խաբել կը տքնի պՁեզ « Դասք քահանայից և Իսրայէլեանք և Մ. Գաբրիէլեանք, որ առ Ձեզ նախ կը վերաբերի քաղաքին յառաջադիմութեան պատասխանատուութեան մեծ գործը չէ՞ք տեսներ արդեօք այս անտանելի և աղետաբեր գեղծումները որ կը գործուի իբր միոյն միջոցաւ Ձեր աչաց առջեւ և թէ Ձեր և թէ եղբարց որդւոց գեղեցիկ և յուսալի ապագան կը կաշխանդուի տգիտութեան չղթաներով ։ ի՞նչ երկաթի ձեռք է այս և ի՞նչ պղնձէ սիրտ ։ . . . որոյ խորտակումն և ընդվզումն այս անօրինին ձեռնարկութեան ընդդիմջումը, և զեկեղեցին ուրիշ տեղ փոխադրելով նոյն դպրոցին բացման ուրախութիւնը լսել կը փափաքիմ ։

Ցուսալով որ իմ ձայնս և խնդիրքս ընդունելի և գործադրելի պիտի ըլլայ ի ձէնջ և այս մասին կրկին տեսնուելնիս ուրիշ առտենի թողլով ։

Կը մնամ Ձեր և ազգիս յառաջադիմութեան բաղձացող ։

17 Յունիս 1872 Նշան Տ. Ներսէսեան

Կ. Պոլիս Կիպռ-ի Խանէյի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թէրսանէի և Թօփհանէի տաճիկ հուն անդրիացի գործաւորք իւրեանց բազմաժամանակեայ սոլորութեան համե-

մաո այս տարի ալ միանալով, 1000 ի չափ անձինք, յատկապէս հինգ չոգենաւ վարձեր, և անցեալ երեքշաբթի օրը պէյքօզ Հիւնքեարի դաշտավայրը երթալով լաւ կերուխում մ՚ըրեր են, հետերնին ունենալով 80 հոգիէ բաղկացեալ նուագածուաց ընտիր խումբ մի։

Երթալու առենին օգոստափառ Սուլթանին պալատին առջեւ չոգենաւին կայնեցուցեր ու բարեմաղթութիւններ ըրեր են, իսկ իդարձին՝ Եդիպտոսի բարձրապատիւ խտիվին չոգենաւուն պատահելով՝ չոգենաւներն կայնեցուցեր են և յարգանս նորին բարձրութեան։

— Շերքէթի-Խայրիյէի 2 թիւ չոգենաւն անցեալ հինգշաբթի երեկոյ կամուրջին ճամբայ ելած առենը Մալուենայի մը զարնուեր է։ Խեղճ թիւավարն ամենայն զօրութեամբ աչխատեր է որ իւր նաւն ազատ պահէ վնասէ, բայց անկարելի եղեր է. նաւուն խելքը (դրչ) խորտակեր է, և թիւավարն ծովը լինկեր է, ուսկից չպիտի կրնայ ազատիլ եղեր եթէ քալ լողալ չդիտնայ։

— Մօտերս Ալթինքի մէջ՝ ուժգին փոթորկէն և կարկուտէն քիչ մը յետոյ, զոր ծանուցինք, վերջին գորտ (գուրպաղը) ալ լկեր է։ Այս առաջին անգամ չէ. քանի մը տարի յառաջ ալ յիշեալ մայրաքաղաքին մէջ սաստիկ փոթորիկ մի պատահեր և անմիջապէս գորտ տեղացեր է։

Փարիզէն յունիս 8 թուականով եկած տեղեկութեանց նայելով, Գաղղիոյ կառավարութիւնը Գերմանիոյ վճարելիք երեք միլիար ֆրանգը անուանի Րոչիլտ սեղանաւորէն փոխ պիտի առնու, և արդէն պէտք եղած պայմանադրութիւնն եղեր է։

Փարիզի երեւելի սեղանաւորք ալ այս մասին միացած են Րոչիլտի հետ, և այս վերջինը Լոնտոն պիտի երթայ՝ տեղւոյն սեղանաւորներն ալ նոյնը հետ ընկերացնելու համար։

Վերջապէս Գաղղիա ամեն միջոց ի գործ կդնէ, պարտքը վճարելու և երկիրն օտարին ձեռքէն ազատելու համար։

— Գերմանիոյ բոլոր բնակչաց թիւն է 41 միլիոն 77 հազար, 20 միլիոն 900 հազարը էգ լինելով։

— Անցեալ 1871 ին, բոլոր Անգղիոյ մէջ 123 միլիոն 401 հազար լիպր թէյ (չայ) վաճառուեր է, և կառավարութիւնը ամեն լիպրայի համար 3 շիլին գրշ առնելով 3 միլիոն 83 հազար լիբրայի հասոյթ ունեցեր է։

ՆՈՐ ՎԻՃԱԿԱՀԱՆ ԵՒ ԵՐԱԶԱՀԱՆ ԸՍՏ ՌՆՈՒԹԵԱՆ

Արաբերէն հին ձեռագրէ թարգմանուած և չորս հատորի բաժնուած։

Առաջին հատորը մանչէն ելած է ուրուն մէջ պարունակին հետաքրքրութեան արժանի չատ մը օգտակարութիւնները, գլխաւորաբար մարդկային արեան յատկութեանն ու զօրութեանը վրայ բացատրութիւններ, առուտուրի մէջ գէն չընելու և միշտ շահելու գաղանիքները եւայլն։

Կծախուի կամուրջի գլխուն պարագան և ամեն հայ գրավաճառաց քով։

Գին 6 ղրուշ։ 7

Մեծ Նոր Խանի վերի դուռը թիւ 3 սեղեակը գաղղիարէն ու տաճկերէն լեզուաց և ռուսերակալութեան դասախօսութիւն կընայ երեքշաբթի, հինգշաբթի և չարաթի օրերը։ Դասատուք այցելութեամբ ալ դասախօսութեան կերթան։ 16

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱՒԱՃԱՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՌԵՆԱՆ
Ս. Պօյիս Քիւրքճի խան ջարի յարկ թիւ 26։